Արձանագրություն N 8
ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/1 ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

11 հոկտեմբերի 2023թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Ասրյանը (ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ Ա. Սիմոնյանը, Ս. Ալեքսանյանը և Լ. Գալֆայանը
Քարտուղար՝ Ս. Գալստյանը:

Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Ջրային կոմիտեի կարիքների համար հոսքաչափերի ձեռքբերման ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/1 ծածկագրով ընթացակարգի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ 6-րդ և 7-րդ չափաբաժինների ընտրված մասնակից «ՇԻՆ ՄՈՆՏԱԺ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ի կողմից պայմանագիրը չկնքելու (հրաժարվելու), որակավորման և պայմանագրի ապահովումները չներկայացնելու վերաբերյալ:

Հանձնաժողովի քննարկում

ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/1 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.09.2023թ. թիվ 7 որոշմամբ ընթացակարգի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ 6-րդ և 7-րդ չափաբաժինների ընտրված մասնակից է ճանաչվել «ՇԻՆ ՄՈՆՏԱԺ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ն:

08.09.2023թ.հրապարակվել է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ ընթացակարգի 1-7 չափաբաժինների համար սահմանվել է անգործության ժամկետ՝ պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը (09.09.2023թ. մինչև 18.09.2023թ. ներառյալ):

25.09.2023թ.-ին 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ 6-րդ և 7-րդ չափաբաժինների ընտրված մասնակից «ՇԻՆ ՄՈՆՏԱԺ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրել է էլեկտրոնային եղանակով՝ ընկերության էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով, ինչպես նաև ARMEPS համակարգի միջոցով «ՇԻՆ ՄՈՆՏԱԺ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ին ուղարկվել է ծանուցում՝ պայմանագիր կնքելու առաջարկը տրամադրված լինելու մասին:

ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/1 ծածկագրով ընթացակարգի հրավերի 9.5 և 10.1 կետերով սահմանված ժամկետում «ՇԻՆ ՄՈՆՏԱԺ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ն չի ներկայացրել պայմանագրի ստորագրված տարբերակը, որակավորման և պայմանագրի ապահովումները: 06.10.2023թ. գրությամբ Ընկերությունը ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/1 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացրել է դիմում՝ մրցույթը չեղյալ հայտարարելու վերաբերյալ՝ պատճառաբանելով. «Պայմանագրի և մրցույթի փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվել է, որ պահանջված տրամագծի խողովակների և դրանց վրա պահանջված հոսքաչափերի մատակարարման կամ գնման պայմանագրերի ստորագրումը հակասում է ՀՀ-ում գործող նորմատիվ իրավական ակտերին, այդ թվում ՀՀ կառավարության և նախարարի որոշումներին:»: Հանձնաժողովի քննարկման արդյունքներով «ՇԻՆ ՄՈՆՏԱԺ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ի դիմումը մերժվել է՝ դրանում բերված փաստերի անհիմն լինելու պատճառով:

Հանձնաժողովի որոշումը

Հիմք ընդունելով ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/1 ծածկագրով ընթացակարգի հրավերի 9.5 և 10.1 կետերը և 8.20 կետը (Ընտրված մասնակցի կողմից պայմանագիրը չկնքելու (հրաժարվելու) կամ պայմանագիր կնքելու իրավունքից զրկվելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը) հանձնաժողովը որոշեց.

1. «ՇԻՆ ՄՈՆՏԱԺ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ին համարել պայմանագիրը ստորագրելու իրավունքից զրկված:
2. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի իրավակարգավորումները և առաջնորդվելով Հրավերի 8.14 կետով՝ հանձնաժողովը առաջարկում է «ՇԻՆ ՄՈՆՏԱԺ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ի նկատմամբ նախաձեռնել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց:
3. ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/1 ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի ընտրված մասնակից հայտարարել «Արտախ» ՍՊԸ-ին, 3-րդ չափաբաժնի ընտրված մասնակից՝ «Պարագիծ» ՍՊԸ-ին, 4-րդ 5-րդ, 6-րդ և 7-րդ չափաբաժինների ընտրված մասնակից՝ «Նորմա-Սերվիս» ՍՊԸ-ին:
4. Ծանուցել ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/1 ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի ընտրված մասնակից «Արտախ» ՍՊԸ-ին, 3-րդ չափաբաժնի ընտրված մասնակից «Պարագիծ» ՍՊԸ-ին, 4-րդ 5-րդ, 6-րդ և 7-րդ չափաբաժինների ընտրված մասնակից «Նորմա-Սերվիս» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա, 400 սենյակ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0
Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ	_____	Ս. Ասրյան
անդամներ	_____	Ա. Սիմոնյան
	_____	Ս. Ալեքսանյան
	_____	Լ. Գալֆայան
Քարտուղար	_____	Ս. Գալստյան